

## ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի արդյունքների մասին

(15.09.2009թ.-10.12.2009թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա և 1 արտահերթ նիստ. ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածով սահմանված կարգով` ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 112 հարց, որից 65-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 39-ը` ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 1-ը` համատեղ, 7-ը` պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր: Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 41 հարցով, որից 21-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին (3-ը անհետաձգելի), 14-ը` ՀՀ ԱԺ պատգամավորներինը (2-ը` ԱԺ որոշման նախագիծ), 1-ը` համատեղ, 3-ը` պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր, իսկ 2-ը` ԱԺ ՕԵԿ և ՀՅԴ պատգամավորական խմբակցության հարցապնդումներն էին:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 153 հարցերից 139-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել եւ ամբողջությամբ ընդունվել են 40-ը (34-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 6-ը` ՀՀ ԱԺ պատգամավորներինը):

Ամբողջությամբ ընդունված 40 օրենքներից 3-ը «մայր» օրենքներ էին (3-ն էլ ՀՀ կառավարության նախաձեռնություններ), իսկ 37-ը` գործող օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը՝

ա) լսեց

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2008 թվականի տարեկան հաշվետվությունը,

-Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի գործունեության ծրագիրը,

-2008 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը,

գ) ընտրեց.

-Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 4 անդամներ,

դ) հաստատեց.

- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 19 միջազգային պայմանագրեր, որոնցից 9-ը ֆինանսատնտեսական, 2-ը՝ պաշտպանության, ազգային

անվտանգության, 1-ը՝ մարզամշակութային, 1-ը՝ կրթական բնագավառներում համագործակցության մասին եւ այլն:

Նստաշրջանի ընթացքում 26 պատգամավոր գրավոր և 58 պատգամավոր բանավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը: «Հայ Հեղափոխական դաշնակցություն» և «Օրինաձեռն երկիր» խմբակցությունները մեկական հարցապնդումներով դիմել են ՀՀ կառավարությանը, որոնց տրվել է գրավոր պատասխաններ և որոնք քննարկվել են ԱԺ-ի նիստում: 74 պատգամավոր հանդես են եկել հայտարարությամբ, որից 16-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը մերժեց.

-«2008թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց պատճառների ուսումնասիրության Ազգային ժողովի նոր ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին (Հեղինակ՝ Լարիսա Ալավերդյան,

-ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Բալասանյանի և Հակոբ Հակոբյանի «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին,

-ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի, Լարիսա Ալավերդյանի, Անահիտ Բախշյանի, Վարդան Խաչատրյանի, Արմեն

Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի և Բաֆֆի Հովհաննիսյանի «Հայաստանի  
Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի  
նախագիծը ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի  
օրակարգում ընդգրկելու մասին հարցերը: